Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի ապրիլի 22-ի
N333-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ 44 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԲԸ ՇԱՐԺԱԿԱԶՄԻ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ (ԴԵՊՈ) ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ վարչական մասնաշենքը կառուցվել է 1950-ական թվականներին և առ այսօր չի հիմնանորոգվել: Շենք-շինությունները գտնվում են անմխիթար վիճակում: Վարչական շենքի արտաքին սալիկապատումը մասամբ քայքայվել և թափվել է և այն թողնում է կիսավեր շինության տպավորություն, որը նաև վտանգ է ներկայացնում մարդկանց համար:

2.Դեպոյի տանիքը քայքայված է և անձրևաջրերը ամբողջությամբ անարգել հոսում են ներս, անհնարին և վտանգավոր դարձնելով տրանսպորտային միջոցների վերանորոգումը և սպասարկումը:

3.Քաղաքային էլեկտրատրանսպորտի զարգացման, նոր տրոլեյբուսների և էլեկտրաբուսների ներկրմամբ ազգաբնակչության տրանսպորտային պահանջները էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցներով ապահովելու համար՝ անհրաժեշտ է ստեղծել նոր ներկրվող տրանսպորտային միջոցներին համապատասխան տեխնիկական սպասարկման կայան: Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել են Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ համաձայն որոնց նախահաշվային արժեքը կազմում է 1,157,901.1 հազար դրամ: Ելնելով աշխատանքների կազմակերպման համար կնքված պայմանագրի գնից՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 955,276.5 հազար դրամ, որից ՝

1) Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման դեպո) մասնաշենքերի *հիմնանորոգման աշխատանքներ՝ 936,870.0 հազար դրամ (համաձայն կնքված պայմանագրի),*

2) Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների *որակի տեխնիկական հսկողության ծառայություն՝ 11,900.0 հազար դրամ,*

3) Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման(դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների *հեղինակային հսկողության ծառայություն՝ 6,506.5 հազար դրամ:*

4) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքների ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում գտնվող պետական սեփականություն համարվող անշարժ գույքի, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից ստացված միջոցների շրջանակում: